## 42. ՆԵՐՔԻՆ ՍՂՆԵՔ

*Գյուղի եզրին, ձորաբերանին կա մի հին գերեզմանատուն՝ հասարակ տապանաքարերով։*

**502. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** *վրա խաչ և տակին՝*

**Թ ՌԽ** Թ[վ]ԻՆ[ ] :ՌԽ: (1591):

## 43. ԴԱՐԱԲՈՒԼԱՂ ԳՅՈՒՂ

*Գյուղամիջում հին հուշարձաններ չկան։ Այս և Ավետարանոց ու Վերին Թաղավարդ գյուղերի արանքում, մի բարձր բլրի վրա գտնվում է Ղևոնդյանց կամ տեղական բարբառով Ղոնդիկ անապատը։ Անապատի ներկա շենքերը և նրանց արձանագրությունները վերաբերում են XIX դարին։ Ավերակների մեջ կան մի քանի հին խաչքարերի և ճարտարապետական մասերի բեկորներ, սակայն առանց արձանագրության։*

*Գյուղից հարավ-արևմուտք, մոտ չորս կիլոմետր հեռու, գտնվում է, Հովհաննես անունով մատուռը, որի արևմտյան մուտքից վեր ագուցված փոքր խաչքարի վրա մնում է հետևյալ արձանագրո. թյունը.*

**503.**




ԽԱՉՍ ՄՈՒ|ՂՏԱՍԻ| ՄԱՐՏԻ|ՐՈՍԻ. Թ[վ]Ի[Ն]. :ՌԿԷ: (1618).| Պ[Ե]ՏՐՈՍ.

Ծանոթ. Պետրոսը *հավանաբար խաչքարը կազմող վարպետն է։*

## 44. ԱՎԵՏԱՐԱՆՈՑ ԿԱՄ ՉԱՆԱԽՉԻ ԳՅՈՒՂ

*Գյուղի Ավետարանոց անունն ավելի հին է և ավանդաբար կապվում է Վաչագան Թագավորի հետ, որն իբր նեղվելով պարսից Պերոզ Թագավորից, մի ավետարան դրկած, առանձնանում է այս գյուղը և որպես ճգնավոր անցկացնում իր օրերը։*

*Գյուղի երկրորդ ծաղկումը կապված է մելիքական շրջանի հետ, երբ այն դառնում է Վարանդայի մելիքների նստոցը։ 1682 Թվականին կովկասյան լեռնականներն ավերում են Սևանա լճի ավազանի գյուղերը։ Այդ ժամանակ Շահնազարյանների տոհմից Մազրայում նըստող Մելիք Հուսեյինը իր եղբորորդի Մելիք Բաշիի հետ վերցնելով իրենց ենթակա ժողովրդի մի մասին, քոչում և հաստատվում են Ավետարանոց գյուղում, ապա պարսպապատելով գյուղը, այն դարձնում ուժեղ ամրացված բերդ ու Վարանդայի մելիքանիստ ավան։*

*Այս գյուղից էր XIX դարի ռուսական բանակի նշանավոր գեներալ Մադաթովը, որը հետագայում դարձավ Ավետարանոցի տերը և այնտեղ հիմնեց իր ապարանքը։*

*Ավետարանոց գյուղը ականատես է եղել բազմաթիվ պատերազմների և արյունահեղությունների, որոնցից արժանահիշատակն է 1733 Թվականին կատարված դեպքը։ Թուրք-պարսկական պատերազմների այդ տարին Ավետարանոցում էր տեղավորված տաճկական մի զորաբաժին՝ Սուլեյման բեկի հրամանատարությամբ, որը ավերածություններին միացնում էր նաև հայ կանանց պատիվը արատավորող իր ցինիկ գործարքները։ Ժողովուրդը չհանդուրժելով դրանք, ոտքի է կանգնում և մի գիշերվա ընթացքում Մելիք Հուսեյինի կին Աննայի և*

դուստր Գայանեի գլխավորությամբ ոչնչացնում ամբողջ զորաջոկատը։ Գայանեն հետագա-յում դարձավ միանձնուհի կուսանոցում, իրեն նվիրեց գրչության արվեստին։ Նրա ձեռա-գիր Ավետարանը արվեստի փայլուն կոթող է։

Ավետարանոց գյուղում կան հետևյալ պատմական հուշարձանները.

Ա. Կուսանաց անապատ. գտնվում է գյուղի եզրին՝ մի ժայռաբլրի վրա. շինված է 1616 թվականին։ Վերանորոգվել ու նոր շենքերով հարստացվել է XVIII դարում։ Եկեղեցին մի փոքրիկ թաղածածկ շենք է, կառուցված անտաշ քարերով. արևմուտքում ունի փոքր գավիթ, որը և ծառայել է որպես դամբարան մելիքների ու նրանց ընտանիքների, ինչպես և մայրա-պետների համար։ Հնում այստեղ եղել են ավելի շատ հանգուցյալներ. հրատարակիչները դրանցից հիշատակում են Մանվել վարդապետին, Մելիք Միրզային, Մելիք Հուսեյնին, Մե-լիք Հովսեփին և մայրապետներին. ցավոք՝ դրանցից ոչ մեկի տապանագրերը չեն արտա-գրվել։ Տեղում այժմ պահպանվել են մեր գծագրածները միայն, երեք տապանագիր և մեկ գերեզմանաքար՝ առանց գրության։

Անապատը շրջափակված է եղել պարսպով, որի ներսում եղել են տնտեսական շենքեր և խուցեր. այդ բոլորի միայն չնչին մասերն են պահպանված։

Բ. Մելիքական ապարանքներ. գտնվում են գյուղի բարձրադիր մասում. դրանցից Մելիք Բաղիինը, որի վերին հարկը կառուցել է Մաղաթովը և վերածել բնակարանի, այժմ ավերակ է, իսկ Մելիք Շահնազար II-ինը դեռևս շեն է։

Գ. Գերեզմանատուն. գտնվում է գյուղի արևմտյան կողմում. շատ հին ծագում է ունե-ցել, ուր և ավանդաբար գտնվում էր Համամ թագավորի գերեզմանը. ավելի նոր մասում եղել են մելիքների և նրանց մերձավորների գերեզմանները։ Այժմ այդ բոլորից ոչինչ չի մնացել տեղում։

Դ. Ս. Աստվածածին. եկեղեցի, գտնվում է գյուղամիջում, ցածրադիր վայրում. մեծ և թաղակապ շենք է՝ կառուցված 1651 թվականին, համակ սրբատաշ քարերով։

ԱՆԱՊԱՏԻ ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի բարավորին, անարվեստ գրերով իրար տակ երեք արձանագրություն.

Ջ
ԵԿՂՑԻՍ
ԹՎԻՆՌԿԵ
ԹՎԿՆՌՃԻԵ
ՇԱԲՆԻՆԵՎԴՆԳՌՎԺ
ՅԻՇԱՄԿԷ ԴՈՒՌՍ
ԿՈՅՍԽՈՍՐՎԻՆ ԵԾՆՈՂԱՑ

504. Ա. ՋԵԿ[Ե]Ղ[Ե]ՑԻՍ| ԹՎԻՆ ։ՌԿԵ։ (1616)

Ծանոթ. Հավանաբար շինության թվականը։

Հրատ. Բարխուդարեանց, 96, Լալաեան, II, 42։

505. Բ. ԹՎԿՆ ։ՌՃԻԵ։ (1676). ՇԱԲՆԻՆ ԵՎ Վ[Ա]Ր[Դ]Ա[Պ]ԵՏ[Ի]Ն . . . ։

Ծանոթ. Հրատարակիչը թվականից հետո վերծանել է «Շահնազարին և վարդապետ Գրիգորի», բայց իրականում այդպես չէ. տե՛ս գծագիրը։

506. Գ. ՅԻՇԱՏ[Ա]Կ Է ԴՈՒՌՍ| ԿՈՅՍԻ ԽՈՍՐ[Ո]ՎԻՆ ԵՎ ԾՆՈՂԱՑ։

Հրատ. Բարխուդարեանց, 96։

507. ՏԱՊԱՆԱՔԱՐ։ գտնվում է Գավիթ-դամբարանում. սպիտակավուն է, բաղկացած բարձից և տապանաքարից. մի երեսին սաղ նվագող, դիմացը՝ երեք պարողներ, ապա ևս երկու ֆիգուր, մեկի ձեռքին հայելանման իր, իսկ մյուսին՝ կենաց ծառ։ Բոլորի դիմացը ուտելիքների պնակներ են, անկյունում առանձին մի ֆիգուր՝ ձեռքին գավ և բլիթ։ Մյուս երեսին՝ երեք հեծյալ և մի թամքած ձի, որի վրա նստել է ուղում թռչունը։ Արձանագրությունը երեք երեսներին և բարձի վրա՝ օղակաձև.





ԱՑՍ Է ՏԱՊԱՆ ՄԷԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ
ՈՐԴԻ ՄԷԼԻՔ| ՑԻՍԷԻՆ, ԹՎ. :ՌՃՁԵ: (1736):
ՈԳԵՄ ԶԲԱՆՍ ԳՈՎԵՍԳԻ,
Ի ՎԵՐԱՑ| ՄԵԼԻՔ ՀՈՒՍԷՑՆԻ,
ԶՈՐ ԳՐԵՑԻ ԱՑՍ ՏԱՊԱՆԻ:
ՍԱ ԷՐ Տ[Է]Ր. ԵՐԿ|ՐԻՆ ՎԱՐ[Ա]ՆԴԱՑ[]Ի,
:ԼԵ: (35) ՄԱ[Ս]Ն[]| ԳԵՂԻ.
ՍԱՑ| ԷՐ ՀԱՑՈՎ ՍԵ|ՂԱՆՈՎ ԼԻ,
ՈՂՈՐՄԷՐ ԱՄ|ԷՆ ԱԶԳԻ.
Կ|ԵՐՊԱՐՆՕՔ|Ն ԷՐ ԳՈՎԵԼԻ,
ԹԱԳ ՊԱՐԶԱՆՔ ՀԱՑՈՑ ԱԶԳԻ.
ՑՈՑԺ ԿՈԴՈՐԵԱՑ ԱԶԳԷՆ ԳԱԶԿԻ,
ՊԱՏԵՐԱԶՄԵԱՑ ՑԵՏ ՕՍՄԱՆՑԻ.
ՍԱ ՈԶ ԵՏ ՀԱՐԿ ԹԱԳԱՒՈՐԻ,
ԱՄՈՒՐ ՊԱՐԻՍՊ ԷՐ ԱՇԽ[Ա]ՐՀԻ[Ս]:

ՈՐ Է ԵԱՇՆ ԹՎ[Ա]Ի[Ն] :ՌՃԾԸ: (1709)

Հրատ. *Րաֆֆի, Խամսայի մելիքությունները,* էջ 49 *(ուղղագրական շտկումներով)*։

***508. ՏԱՊԱՆԱՔԱՐ****, նախորդի մոտ, երեսին, մի շարքի վրա երեք պարող-
ներ և նվագող, ապա հեծյալ, որի ետևում թամքի վրա նստած թռչուն, իսկ դիմա-
ցը՝ հրացան. ներքևի շարքում երկու մատռվակ և ըմպողներ. ստորին մասում 3 տող.*



ԱՑՍ Է ԴԱՊԱՆ ՄԷԼԻՔ ՊԱՂՐԻ ՈՐ-
ԴԻ Օ[Է]ԼԻՔ ՄԻՐԶ|ԱՑԲԷԿԻՆ. ԹՎԻՆ
:ՌՃՂԳ: (1744). ՆՈԵՄԲԵՐԻ :Ժ: (10)
ԱՌ[Ա]ՒՈ[Ւ]ՏՆ ԱՌ| ԱԾ. ՓՈԽԵՑԱՒ. ԶՕՎ
ՈՐ ԳԱՐԴԱ ՈՂՈՐՄԻ ԱՍԻ ԱՄԷՆ:

*509. ԿՈԽՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏԻ եկեղեցու վեմ-քարի վրա եղել է.*

Թվ[ի]ն[՝] :ՌԿԵ: (1616). Ես Աքաս Հխմզզի(՟) կանգնեցի խաչս ի հայր իմ վինակին:

*Հրատ. Բարխուդարեանց, 95։*

*510. ՏԱՊԱՆԱԳՐԵՐ, որոնք եղել են մելիքական գերեզմանատան քարերի վրա.*

Այս է տապան Մէլիք Շահնազարին,
Որ է որդի Մելիք Ցիւսէինին,
Արցախ գաւառաց իշխանին,
Վարանդու տիրապետողին.
Սա էր հայր Մէլիք Ջումշիտին,
Ըստ Ռուսաց պլկովնիկին,
Ազնիւ ոմն Հայոց ազգին,
Արի և քաջ զօրավարին.
Խնդրեմ առնել զայս արժանին
Միոյ բերան հայր մեղային.
:ՌՄԽ: (1791) թվին:

*Հրատ. Բարխուդարեանց, 97։ Լալաեան, II, 44։*

**511.** Այս է տապան Մէլիք Ջումշուտին,
. . . . . . . . . . . . Սա էր
Թոռն մեծասերին,
Ազնիւ Մէլիք Ցիւսէյինին.
Խնդրեմ առնել զայս արժանին,
Միոյ բերան հայր մեղային.
Թվ[ի]ն[՝] :ՌՄԿԱ: (1812) Ապրիլի :ԻԵ: (25):

*Հրատ. Բարխուդարեանց, 97։ Լալաեան, II, 44։*

**512.** Այս է տապան Մէլիք Ջհանբախշին,
Իշխող Վարանդայ գաւառին
Ազնիւ որդոյ Մէլիք Շահնազարին.
Վախճանեցաւ 1822:

*Հրատ. Բարխուդարեանց, 98։ Լալաեան, II, 44։*

**513.** Մէլիք Խուդաթ իշխող Վարանդայ,
Թոռն ըստ մարմնոյ Մէլիք Ջումշիտայ,
Այս նորա տապան յորում մարմնով կայ,
Կենդանի հոգւով միշտ և յարակայ,
Ամաց քառասնից ել սա յաշխարհէ,
Ձեռծ արդ գտանի յամենայն չարէ.
Զայս վէմ ես շինել առն իւրում ի ձօն,
Ի պատիւ սորա՝ կին սորին զզօն.
Թվ[ի]ն[՝]: ՌՄՁԲ: էր (1833):

*Հրատ. Բարխուդարեանց, 98։ Լալաեան, II, 44—45։*

**514.** Այս է տապան Մէլիք Յիւսէյինի որդի · · · · Աւաքեաւնին. թվ՟ին՟ :ՌՄՀԲ: (1823):

*Հրատ. Բարխուդարեանց, 98։*

**515.** Այս է տապան Մէլիք Յիւսէյինի որդի Մանասան Բէկին. թվ՟ին՟ :ՌՄԾԶ: (1807):

*Հրատ. Բարխուդարեանց, 98։*

**516.** Այս է տապան Մէլիք Շահնազարի որդի Մէլիք Յիւսէյինին. թվ՟ին՟ :ՌՄԾ: էր (1801):

*Հրատ. Բարխուդարեանց, 98։*

ՆՈՒՅՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ ԵՂԵԼ ԵՆ

***517. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, աջ կողմում թագավորի պատկեր, աջ ձեռքին խաչ, նըստած ձիու վրա. ետևից երախը բաց վիշապ. վրան եղել է կիսեղծ արձանագրություն։*

Ի :ՈՂ: (1241) · · · ննեց Հա · · · թգաւորի Աղվց · · · Ես տէր Մասուն գրեցիք այս. ով որ կարդէ Ած. ողորմի ասէ.

Ծանոթ. *Համարվում է Աղվանից թագավոր Համամ իշխանի գերեզմանաքարը։ Եթե ճիշտ համարվի դա, ապա ուրեմն այդ քարը նորոգել է և արձանագրությունը գրել ոմն Մասուն, Համամից շատ հետո, որը IX դարի գործիչ էր։ Այս գերեզմանաքարի մոտ եղել է մեկ ուրիշը ևս՝ թագուհու պատկերով, բայց անարձանագիր։ Այժմ ոչ մեկը տեղում չեն։*

*Հրատ. Բարխուդարեանց, 98—99։*

***518. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** վրա եղել է.*

Այս խաչս Թորոս այղայ. թվ՟ին՟ :ՈՁ: (1157) ար(էր):

Ծանոթ. *Դատելով լեզվից, թվականը սխալ է նշանակել հրատարակիչը, այն պետք է լինի՝ ։ՌՁ։*

*Հրատ. Բարխուդարեանց, 98։*

***519. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** վրա եղել է.*

Այս է հանգիստ Մուրադի Ղաքիոնա Գաջի (քաջի) Վարանդայ գավառ. հիմուտոյն տապարբեցի.

Ծանոթ. *Հրատարակիչը այս միացրել է «Համամի» տապանագրին, որոնք լեզվի տեսակետից անհարիր են։*

*Հրատ. Բարխուդարեանց, 98—99։*

***520. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** վրա, որը գտնվելիս է եղել մի պարտեզի մեջ.*

Անուան Մէլիք Շահնազարին, որ է որդի Մէլիք Սէյինի. այն ժամանակն որ Կուրճին եկաւ թուին .ՌՃՂԹ: (1750) էր, որ ղալաս շինեցի. ով որ կարդա, մէկ բերան Աստուած ողորմի ասի. ամէն:
Այս է տապան Գաբրիէլի որդի Դաւթին :թվ՟ին՟: ՌՄԽԸ (1799):

*Հրատ. Բարխուդարեանց, 96 (համարում է բերդի պարիսպները շինող վարպետը)։*

**521.** *ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ապարանքի գարբասի ճակատին գրված է եղել.*

Այս ամարաթս Մէլիք Շահնազարի որդի Սէյին Բէկին, որ է այս շինութիւնս. որ շինել տուած շէնքն է. թվին :ՌՄԼԵ: (1786):

*Հրատ. Բարխուդարեանց, 95։ Լալաեան, II, 32։*

**522.** *ԳՑՈՒՂԱՄԻՋԻ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ եկեղեցու մուտքի բարավորի վրա՝*
թվին :ՌՃ: (1651)

*Հրատ. Բարխուդարեանց, 94։*

## ՀԱՎԵԼՎԱԾ

*Գյուղի եկեղեցիներում պահվել են արծաթյա խաչեր, որոնց վրա եղել են հետևյալ արձանագրությունները.*

**523.** Յիշատակ է խաչս տէր Սամուէլ վարդապետին. :ՌՃԺԹ: (1670):

*Հրատ. Ջալալեանց, 248։*

**524.** Այս է նշան Քրիստոսի և բարեխօս տէր Բարսեղ եպիսկոպոսին, Գրիգորիսի՝ որ այժմ Մասաս Լոյսի. թվին :ՌՃԺ: (1661).

*Հրատ. Ջալալեանց, 248։*

**525.** Սուրբ խաչս յիշատակ է Մէլիք Բաղուն և իւր կողակից Մարիամին, ի դուռն Ամարասայ. թվին հայոց :ՌՃԺ: (1661):

*Հրատ. Ջալալեանց, 248։*